ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/110

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից 30.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 30.10.2018թ. ներկայացրել էր բողոք, որը կազմված էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Բողոքներ քննող անձը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել էր «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից 30.10.2018թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Բողոքներ քննող անձին ներկայացնելու համար:

Ընկերությունը 02.11.2018թ. Բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

««Լիմուշ» ՍՊԸ-ն՝ հանդիսանալով «Mondi Group» ընկերության պաշտոնական դիստրիբյուտորը, իրականացնում է տպագրական թղթերի, գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների ներկրում և վաճառք: Ընկերությունը ցանկանում է մասնակցել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-8/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մրցույթի 1-ին չափաբաժնին (թուղթ A4 ֆորմատի), սակայն պատվիրատուի կողմից առաջադրված տեխնիկական բնութագրերը այնպիսին են, որ խնդիրներ են առաջացնում մասնակցության հետ կապված:

Պատվիրատուի կողմից առաջադրված տեխնիկական բնութագրերը հետևյալն են՝

«Թուղթ չկավճած, A դասի, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Չևաչափը՝ A4 (210x297 մմ): Համապատասխան ISO 9001, 14001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին: Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, կոշտությունը MD՝ առնվազն 100, կոշտությունը CD՝ առնվազն 35, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի, առնվազն՝ 169 CIE, հաստությունը՝ համաձայն ISO 534 ստանդարտի՝ առնվազն 108 Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 94%, անհարթությունը՝ 120մլ/րոպեից ոչ ավել (համաձայն ISO 8791/2), խոնավությունը՝ առնվազն 3,9 %: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (+-0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի որակի, ինչպես նաև տեխնիկական բնութագրին համապատասխան լինելու մասին հավաստագիր»:

«Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրերը հետևյալն են՝

«Թուղթ չկավճած, Maestro expert A4 A դասի, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Չևաչափը՝ A4 (210x297 մմ): Համապատասխան ISO 9001, 14001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին: Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, կոշտությունը MD՝ 150, կոշտությունը CD՝ 70, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի՝ 168 CIE, հաստությունը՝ համաձայն ISO 534 ստանդարտի՝ 110 Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի՝ 95%, անհարթությունը՝ 160մլ/րոպ (համաձայն ISO 8791-2), խոնավությունը՝ 4,6%: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ: 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ»:

Ընկերությունը տեխնիկական բնութագրերի տարբերությունները ներկայացրել է նաև համեմատական աղյուսակի տեսքով.

Ցուցանիշ	Չ/մ	Ստանդարտ	«Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Maestro expert A4 թղթի տեխ.բնուգարերը	Պատվիրատուի կողմից առաջարված A4 թղթի տեխ. բնուգարերը
Խտությունը	գր/մ2	ISO 536	80	80
Հաստությունը	մկմ	ISO 534	110 +-3	առնվազն 108
Կոշտությունը MD		ISO 2493	150 (ոչ պակաս 130)	առնվազն 100
Կոշտությունը CD		ISO 2493	70 (ոչ պակաս 58)	առնվազն 35
Անհարթությունը	մլ/րոպ	ISO 8791/2	160 +-50	ոչ ավել 120
Սպիտակությունը CIE		ISO 11475	168 +-3	առնվազն 169
Անթափանցելիությունը	%	ISO 2471	95 (ոչ պակաս 93)	առնվազն 94
Խոնավությունը	%		4,6 +-0,6	3.9

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես

նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-8/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մրցույթի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրերը փոփոխել, ինչը հնարավորություն կտա, որպեսզի ավելի շատ թվով ընկերություններ, այդ թվում նաև «Լիմուշ» ՍՊԸ-ն կարողանա մասնակցել վերոհիշյալ մրցույթին, քանի որ «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող Maestro Expert A4 ֆորմատի թուղթը նույնպես A դասի է, շեղումները՝ շատ չնչին են, որոշ չափանիշներով նաև գերազանցում են պատվիրատուի կողմից առաջադրված տեխնիկական բնութագրերին: Դա կբերի մրցակցության ավելացմանը և հետևաբար՝ լավագույն գնային առաջարկի»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Վահրամ Դարբինյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին

տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Գագիկ Ուստյանը և Աշոտ Մովսեսյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/110 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից 30.10.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-8/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Պատվիրատուի կողմից հայտնած բանավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը A 4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-8/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով սահմանված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» համաձայն՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանվել են հետևյալ բովանդակությամբ.

«Թուղթ չկավճած, A դասի, օգտագործվում է լազերային և թանաքային տպագրման, պատճենահանման և գրասենյակային այլ աշխատանքների համար: Չևաչափը՝ A4 (210x297 մմ): Համապատասխան ISO 9001, 14001 կառավարման սերտիֆիկացման համակարգերին: Խտությունը՝ համաձայն ISO 536 ստանդարտի՝ 80 գր/մ2, կոշտությունը MD՝ առնվազն 100, կոշտությունը CD՝ առնվազն 35, սպիտակությունը՝ համաձայն ISO 11475 ստանդարտի, առնվազն՝ 169 CIE, հաստությունը՝ համաձայն ISO 534 ստանդարտի՝ առնվազն 108 Մկմ, անթափանցելիությունը՝ համաձայն ISO 2471 ստանդարտի առնվազն 94%, անհարթությունը՝ 120մլ/րոպեից ոչ ավել (համաձայն ISO 8791/2), խոնավությունը՝ առնվազն 3,9 %: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, առանց շեղումների, 1 տուփի քաշը՝ 2,5 կգ (+-0.05կգ): 500 թերթանոց յուրաքանչյուր 5 տուփ՝ փաթեթավորված ստվարաթղթե արկղի մեջ: Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ապրանքի որակի, ինչպես նաև տեխնիկական բնութագրին համապատասխան լինելու մասին հավաստագիր»:

«ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագրով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ, որոնք խնդիրներ են առաջացնում տվյալ Ընթացակարգին Ընկերության մասնակցության առումով: Մասնավորապես, բողոքաբերը Բողոքով նշել է, որ, թեև «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող A4 ֆորմատի թուղթը նույնպես A դասին է պատկանում, Հրավերով նախատեսված բնութագրի պարամետրերից շեղումները շատ չնչին են, որոշ չափանիշներով նույնիսկ գերազանցում է Պատվիրատուի կողմից առաջադրված տեխնիկական բնութագիրը, սակայն մի շարք չափանիշների անհամապատասխանության պատճառով Ընկերությունը չի կարող մասնակցության հայտ ներկայացնել վերը նշված Ընթացակարգին: Վերոգրյալով պայմանավորված՝ «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ն խնդրել էր Բողոքներ քննող անձին՝ պարտավորեցնել փոփոխել գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, ինչի արդյունքում Ընկերությունը ևս հնարավորություն կստանա մասնակցելու վերոհիշյալ Ընթացակարգին:

Իր կողմից բերված փաստարկները հիմնավորելու նպատակով «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրեց Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված A4 ֆորմատի թղթի և «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող A4 ֆորմատի թղթի որակական չափանիշների համեմատական աղյուսակը:

Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը նկատեց, որ բողոքաբերի՝ Բողոքով ներկայացված փաստարկները և պահանջն անհիմն են, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված՝ A4 ֆորմատի թղթի բնութագրերը հիմնավորված են, համարժեք են Պատվիրատուի կարիքին, և հիմնված են բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքների վրա: Բացի այդ, Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով թղթի պարամետրերը սահմանվել են միջակայքով, այլ ոչ թե հաստատուն թվային մեծություններով, ինչը մասնակիցներին հնարավորություն է տալիս ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել որակյալ թղթի առավելագույնս լայն տեսականի: Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան թուղթը ներկայումս արտադրվում է մի շարք համաշխարհային ճանաչված կազմակերպությունների կողմից: Միաժամանակ, Պատվիրատուի ներկայացուցչի խոսքով, «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող թղթի բնութագրում առկա որոշ պարամետրեր ընդունելի չեն Պատվիրատուի համար, քանի որ յուրաքանչյուր պարամետրի փոփոխման հետ էապես փոփոխվում են նաև ապրանքի որակական հատկանիշները և գինը: Օրինակ՝ Ընկերության կողմից առաջարկվող

թղթի անհարթության ցուցանիշը (160+-50 մլ/րոպ) չի կարող համարվել ընդունելի, քանի որ նման անհարթության ցուցանիշով թղթի օգտագործումը կհանգեցնի տպիչի ներկի հավելյալ օգտագործմանն, ինչն էլ իր հերթին ենթադրում է լրացուցիչ ծախս:

Ընկերության տնօրենն ընդունեց այն հանգամանքը, որ Հրավերով նախատեսված բնութագրերով ապրանքը ներկայումս արտադրվում է բազմաթիվ ճանաչված արտադրողների կողմից: Բողոքներ քննող անձի այն հարցին, թե Հրավերով սահմանված բնութագրում արդյոք առկա են խտրական պարամետրեր կամ չհիմնավորված խոչընդոտներ, Ընկերության տնօրենը նշեց, որ վերը նշված բնութագիրն իր կողմից չի որակվում որպես խտրական կամ սահմանափակող, և որ Բողոքի ներկայացման համար հիմք է հանդիսացել վերջինիս այն դիտարկումը, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրի մի շարք պարամետրերի փոփոխման արդյունքում Ընկերությունը ևս հնարավորություն կստանար մասնակցելու կազմակերպված աճուրդին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես

նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով պահանջվող՝ A4 ֆորմատի թղթի բնութագրում նշված են գնման ենթակա ապրանքի հատկանիշների նվազագույն և առավելագույն թվային և տոկոսային սահմանաչափերը (միջակայքերը), և նշված չեն կոնկրետ թվային կամ տոկոսային մեծություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից չհիմնավորվեց Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա A4 ֆորմատի թղթի տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, և չմատնանշվեց դրանցում առկա՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող որևէ նորմով սահմանված պահանջի կամ պայմանի խախտում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-8/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքի հատկանիշները ներկայացված են բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան, չեն պարունակում Օրենքի իմաստով հղումներ՝ նշումներ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի վերաբերյալ, Պատվիրատուի կողմից հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման

նպատակով կատարվում է տվյալ գնումը, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ Բողոքով ներկայացված գնման ենթակա ապրանքի հատկանիշները փոփոխելու պահանջն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից 30.10.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ